ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"16" մարտի 2004թ. N 63

ք.Ստեփանակերտ

«Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը, գույքի կազմը և չափը հաստատելու մասին
(վերնագիրը փոփ. 12.10.2017 N 45-Ն)

«Պետական կառավարչական հիմնարկների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ», «գ», «զ» ենթակետերին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Ստեղծել «Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ:

(1-ին կետը փոփ. 12.10.2017 N 45-Ն)

2. Հաստատել՝

ա) Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կանոնադրությունը՝ համաձայն թիվ 1 հավելվածի.

բ) Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն թիվ 2 հավելվածի.

գ) Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

(2-րդ կետը փոփ. 12.10.2017 N 45-Ն)

ԼՂՀ վարչապետ ***Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ***

Հավելված 1
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
«16» մարտի 2004թ. N 63 որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է գյուղատնտեսության բնագավառում Արցախի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

2. Նախարարությունը ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

3. Նախարարությունն իր գործունեությունն իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությանը, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերին և այլ իրավական ակտերին համապատասխան և դրանցով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:

4. Նախարարությունն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով ու իր անվանմամբ հայերեն կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ: Նախարարությունը կարող է ունենալ Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով իր անվանմամբ հայերեն և այլ լեզվով կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

5. Նախարարությունը իր համակարգի մեջ մտնող պետական մարմինների և կազմակերպությունների նկատմամբ վերադաս մարմին է:

6. Նախարարության համակարգը կազմված է նախարարից, նախարարի տեղակալներից, խորհրդականներից, օգնականներից, նախարարության աշխատակազմից, տարածքային ստորաբաժանումներից, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնից, ինչպես նաև նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպություններից:

7. Նախարարության նպատակները և խնդիրներն են՝

1) ագրոպարենային ոլորտում Արցախի Հանրապետության կառավարության տնտեսական քաղաքականության մշակումը և իրականացումը.

2) գիտատեխնիկական միասնական քաղաքականության հիման վրա Արցախի Հանրապետության գյուղատնտեսության ներուժի առավելագույնս օգտագործման միջոցով գյուղատնտեսության զարգացման, գյուղատնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման ապահովումը.

3) ագրոպարենային ոլորտում կատարվող գործընթացների համալիր վերլուծությունների, համապատասխան կանխատեսումների հիման վրա ագրարային և ինվեստիցիոն քաղաքականության հիմնադրույթների, հայեցակարգերի, ծրագրերի մշակումն ու իրականացումը, շուկայական հարաբերությունների ձևավորման և համապատասխան ենթակառուցվածքների զարգացման գործընթացին աջակցությունը.

4) տեղական արտադրողների մարքեթինգային գործունեության իրականացման աջակցության ապահովումը և գյուղատնտեսական մթերքների ու հումքի արտահանման խթանումը.

5) օրենքով սահմանված կարգով գյուղատնտեսական տեխնիկայի տեսչական գործունեության իրականացման ապահովումը.

6) օրենքով սահմանված կարգով ջրային համակարգերի տեսչական գործունեության իրականացման ապահովումը.

7) կոոպերացիայի զարգացման ու ընդլայնման ապահովումը.

8) ագրովերամշակող արդյունաբերության զարգացման ու ընդլայնման ապահովումը.

9) սննդի շղթայի (արտադրության և շրջանառության փուլեր) բոլոր փուլերում վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի (ՎՎՀԿԿ) համակարգի ներդրման գործընթացի աջակցության ապահովումը.

10) գյուղատնտեսական գործունեության իրականացման լիցենզիաների և (կամ) արտոնագրերի տրամադրման ապահովումը.

11) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Արցախի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցների նպատակային ու արդյունավետ օգտագործման ապահովումը.

12) նախարարության համակարգի զորահավաքային նախապատրաստության, զորահավաքի և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորման և իրականացման ապահովումը.

13) սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության, բուսասանիտարիայի բնագավառներում պետական քաղաքականության մշակումը և իրականացումը.

14) պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման և անվտանգ օգտագործման ապահովումը.

15) ջրային համակարգերի կառավարման քաղաքականության մշակման և իրականացման ապահովումը:

8. Նախարարության անվանումն է՝

հայերեն՝ Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն,

ռուսերեն՝ Министерство сельского хозяйства Республики Арцах,

անգլերեն՝ Ministry of agriculture of the Artsakh Republic:

Նախարարության գտնվելու վայրն է՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Թումանյան 115:

2. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Նախարարությունն իր նպատակների և խնդիրների իրագործման համար Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) ագրոպարենային ոլորտում ձեռնարկատիրական գործունեությանը նպաստող ծրագրերի մշակում և իրականացման մոնիթորինգ.

2) Արցախի Հանրապետության ագրարային ու պարենային ապահովության ծրագրերի մշակում և իրականացման մոնիթորինգ.

3) գյուղատնտեսության բնագավառում միջպետական համագործակցության ծրագրերի մշակում և դրանց իրականացման մոնիթորինգ.

4) ոլորտում համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերի հաստատում և հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրների վարում.

5) գյուղատնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների աջակցության ծրագրերի մշակում և իրականացման մոնիթորինգ.

6) գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնաբուծության աջակցության, բույսերի, բուսական արտադրանքի ու կարգավորող առարկաների կարանտին հիվանդությունների ու առավել վնասակար օրգանիզմների դեմ պայքարի միջոցառումների ծրագրերի մշակում և իրականացման մոնիթորինգ (բացառությամբ տեսչական գործառույթների).

7) կենդանիների տոհմային գործի զարգացման, անասնաբուժության ու հակաանասնահամաճարակային միջոցառումների ծրագրերի մշակում և իրականացման մոնիթորինգ (բացառությամբ տեսչական գործառույթների).

8) ոռոգման ծրագրերի մշակում և իրականացման մոնիթորինգ.

9) Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ Արցախի Հանրապետության գյուղատնտեսական հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման ու մելիորացիայի (բարելավման) ծրագրերի մշակում և իրականացման մոնիթորինգ.

10) ջրային համակարգերի շահագործման հայեցակարգերի, ծրագրերի մշակում և իրականացման մոնիթորինգ.

11) Արցախի Հանրապետության ջրային օրենսգրքով նախատեսված գետերի ջրերի վնասակար ներգործության կանխման և վերացման միջոցառումների մշակում և իրականացման մոնիթորինգ.

12) ոլորտում կադրերի պատրաստման, վերապատրաստման և վերաորակավորման մասնագիտական պահանջարկի ծրագրավորում, քաղաքականության ու ծրագրերի մշակում և իրականացման մոնիթորինգ.

13) ոլորտում գիտատեխնիկական քաղաքականության և առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման, ինովացիոն ծրագրերի մշակման և իրականացման մոնիթորինգ.

14) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գնումների գործընթացի կազմակերպում.

15) գյուղատնտեսության բնագավառին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակման ու քննարկման գործընթացներին՝ սահմանված կարգով մասնակցություն.

16) բնագավառին առնչվող օրենսդրական ակտերի նախագծերի մշակում, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված դեպքերում բնագավառը կարգավորող այլ իրավական ակտերի մշակում և հաստատում.

17) իր ենթակայության կազմակերպություններին ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ վերահսկողություն, իսկ հիմնադրի որոշմամբ կամ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում՝ գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար համաձայնության տրամադրում.

18) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բաժնետիրական ընկերություններում՝ պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարում.

19) նախարարության տեղեկատվական քաղաքականության և հասարակայնության հետ կապերի կազմակերպում ու իրականացում:

3. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

10. Նախարարությունը գլխավորում և նախարարության համակարգի մեջ մտնող պետական մարմինների և կազմակերպությունների գործունեությունը կառավարում է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարը (այսուհետ՝ նախարար), որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և հաշվետու է Արցախի Հանրապետության Նախագահին:

Նախարարն ունի տեղակալ (տեղակալներ), որին (որոնց) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

11. Նախարարն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով:

12. Նախարարն իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված խնդիրներն ու գործառույթները և պատասխանատու է լիազորված բնագավառներում քաղաքականության մշակման ու իրականացման, տիրող իրավիճակի գնահատման և վերլուծության, հեռանկարային զարգացման ապահովման համար:

13. Նախարարը՝

1) իր իրավասության սահմաններում ընդունում և օրենքով սահմանված կարգով հրապարակում է գերատեսչական իրավական ակտեր.

2) ղեկավարում, համակարգում և վերահսկում է նախարարության և նախարարության համակարգի մեջ մտնող պետական մարմինների և կազմակերպությունների ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է նախարարության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

3) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված գործունեության բնագավառների, նպատակների ու խնդիրների վերաբերյալ համապատասխան առաջարկություններ է ներկայացնում Արցախի Հանրապետության Նախագահին և կառավարություն.

4) իրականացնում է նախարարության աշխատակազմի կառավարումը՝ օրենքով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունների սահմաններում.

5) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ և տալիս ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Արցախի Հանրապետության կամ նախարարության անունից, ինչպես նաև տալիս է Արցախի Հանրապետության կամ նախարարության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

6) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է նախարարության համակարգի աշխատողներին, նշանակումներ է կատարում նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոններում, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

7) տրամադրում է արձակուրդ նախարարության աշխատակազմի ղեկավարին՝ Արցախի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը և դրանով սահմանված կարգին համապատասխան.

8) Արցախի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան՝ սահմանում է նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասության սահմանները.

9) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

10) կարող է կազմավորել աշխատանքային խմբեր, հանձնաժողովներ.

11) հաստատում է նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի տարեկան գործունեության ծրագիրը.

12) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմնի ղեկավարին տալիս է պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ և հսկում է դրանց կատարման ընթացքը.

13) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված իր լիազորության սահմաններում կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում իր տեղակալների, նախարարության համակարգի պետական մարմնի ղեկավարի, նախարարության աշխատակազմի ղեկավարի, նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների, ինչպես նաև նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հիմնարկների ղեկավարների՝ Արցախի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, հանձնարարագրերը, կարգադրությունները և ցուցումները.

14) լսում և Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության համակարգի մեջ մտնող պետական մարմնի և կազմակերպությունների գործունեության մասին տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, հաստատում նախարարության մարմինների տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերստուգման արդյունքները.

15) վերահսկողություն է իրականացնում նախարարության կողմից պետական գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման, աշխատակազմին ամրացված պետական սեփականության պահպանության ու օտարման նկատմամբ.

16) Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության և նախարարության համակարգի մեջ մտնող պետական մարմնի և կազմակերպությունների կանոնադրությունները և կառուցվածքները.

17) Արցախի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության համակարգի աշխատողների թիվը.

18) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով շնորհում է Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության դասային աստիճաններ, հատուկ կոչումներ.

19) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նախարարության համակարգի աշխատողներին ներկայացնում է Արցախի Հանրապետության պետական պարգևներով պարգևատրման.

20) ստեղծում է խորհրդակցական մարմիններ.

21) իր լիազորության սահմաններում հիմնում է գերատեսչական պարգևներ.

22) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում համաձայնություն է տալիս նախարարության համակարգի պետական մարմնի պաշտոնում նշանակում կատարելու համար.

23) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

14. Նախարարի բացակայության դեպքում, նրա հանձնարարությամբ, նախարարի պարտականությունները կատարում է նախարարի տեղակալը (տեղակալներից մեկը):

15. Նախարարի տեղակալը՝

1) համակարգում է նախարարության համակարգի աշխատանքները՝ նախարարությանը վերապահված քաղաքականության իրականացման իրեն հանձնարարված բնագավառներում.

2) իր լիազորության սահմաններում համակարգում է նախարարության՝ իրեն հանձնարարված բնագավառներում քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացումը՝ նախարարության համակարգի պետական մարմինների և նախարարության կառավարման ոլորտում գործող կազմակերպությունների աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների միջոցով տալով ցուցումներ ու հանձնարարականներ.

3) նախարարության նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ իրեն հանձնարարված բնագավառներում նախարարության համակարգի մարմիններին տալիս է հանձնարարականներ և առաջադրանքներ, վերահսկողություն իրականացնում դրանց կատարման նկատմամբ.

4) նախարարի հանձնարարությամբ իրականացնում է նախարարի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումները.

5) համակարգում է իրեն հանձնարարված բնագավառներում նախարարության համակարգի մարմինների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը.

6) իր լիազորության սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ.

7) իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները.

8) նախարարին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի վերաբերյալ.

9) ապահովում է իրեն հանձնարարված բնագավառներում նախարարի հրամանների ու ցուցումների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին տեղեկացնում նախարարին.

10) նախարարին և աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ նրանց վերաբերող հարցերի մասին.

11) նախարարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

12) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

16. Նախարարը կարող է ունենալ մամուլի քարտուղար և ռեֆերենտներ, որոնց միջև սահմանում է պարտականությունների բաշխումը:

17. Նախարարության առջև դրված խնդիրներն ու գործառույթներն արդյունավետ իրականացնելու նպատակով նախարարին կից ստեղծվում է կոլեգիա, որը՝

1) օժանդակում է նախարարության գործունեության ռազմավարական պլանավորման, քաղաքական որոշումների կայացման, միջոցառումների ծրագրերի մշակման գործընթացներին.

2) նպաստում է ռազմավարական ծրագրերի իրականացմանը, գնահատմանը և այդ գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցությանը.

3) մշակում և ներկայացնում է նախարարության կառավարման արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ:

4. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

18. Նախարարության աշխատակազմի նպատակը և խնդիրը նախարարության (այդ թվում՝ նրա կազմում գործող գործակալությունների ու տեսչությունների)՝ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նախարարության մասնակցության ապահովումն է:

19. Նախարարության աշխատակազմն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է, որն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որպես պետական կառավարչական հիմնարկ, ենթակա է հաշվառման իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:

20. Նախարարության աշխատակազմը գործում է Արցախի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Արցախի Հանրապետության օրենքի, այլ օրենքների ու իրավական ակտերի, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

21. Նախարարության աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, ամրացված գույք, իր իրավասության սահմաններում Արցախի Հանրապետության անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

22. Նախարարության աշխատակազմն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

23. Նախարարության աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Նախարարության աշխատակազմի կատարած գործառույթների և մատուցած ծառայությունների դիմաց կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով:

24. Նախարարության աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով: Նախարարության աշխատակազմի պահպանման կարիքների համար, ինչպես նաև նախարարության լիազորությանը վերապահված բյուջետային ծրագրերի շրջանակներում գնումները կատարվում են «Գնումների մասին» Արցախի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

25. Նախարարության աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է Արցախի Հանրապետությունը:

26. Նախարարության աշխատակազմի անվանումն է՝ Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ:

27. Նախարարության աշխատակազմի գտնվելու վայրն է՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Թումանյան 115:

5. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

28. Նախարարության աշխատակազմի գույքն օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Արցախի Հանրապետության կառավարության կողմից, ինչպես նաև Արցախի Հանրապետության անունից աշխատակազմի կնքած գործարքների միջոցով ձեռք բերված և աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից (ներառյալ գույքային իրավունքները), որը հաշվառվում է նրա հաշվեկշռում: Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ նախարարության աշխատակազմին կարող է վերապահվել նաև պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

29. Արցախի Հանրապետության կառավարությունն իրավունք ունի ցանկացած ժամանակ վերցնելու իր կողմից նախարարության աշխատակազմին հանձնված գույքը:

30. Նախարարության աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու իրեն հանձնված գույքը:

31. Արցախի Հանրապետության կառավարության կողմից նախարարության աշխատակազմին հանձնված գույքը ենթակա է հաշվառման՝ կառավարության սահմանած կարգով:

6. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

32. Նախարարության աշխատակազմի կառուցվածքը ներառում է նրա կառուցվածքային ստորաբաժանումները (վարչություններ, բաժիններ, քարտուղարություն) և առանձնացված ստորաբաժանումները (գործակալություններ, տեսչություններ):

33. Նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է նախարարը:

34. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է Արցախի Հանրապետության կառավարությունը՝ Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի ներկայացմամբ:

35. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն օրենքով, իսկ առանձին դեպքերում՝ նաև Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ծառայությունների մատուցման, վերահսկողության գործառույթներ և պատասխանատվության միջոցներ կիրառող մարմին է:

36. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն իրականացնում է նաև նախարարության աշխատակազմի առանձին գործառույթները կամ դրանց մի մասը և հանդես է գալիս Արցախի Հանրապետության անունից:

37. Առանձնացված ստորաբաժանումն իրավունք ունի Արցախի Հանրապետության անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային

իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

38. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն ունի Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և նախարարության աշխատակազմի ու իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

7. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

39. Նախարարության աշխատակազմի կառավարումն իրականացնում են Արցախի Հանրապետության կառավարությունը և նախարարը՝ օրենքով և սույն կանոնադրությամբ իրենց վերապահված իրավասությունների սահմաններում:

Նախարարության աշխատակազմը ղեկավարում է նախարարության աշխատակազմի ղեկավարը, որին օրենքով սահմանված կարգով պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

40. Արցախի Հանրապետության կառավարությունը՝

1) վերակազմակերպում և դադարեցնում է նախարարության աշխատակազմի գործունեությունը.

2) հաստատում է նախարարության աշխատակազմի կանոնադրությունը և դրանում կատարում փոփոխություններ.

3) որոշում է նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը.

4) հաստատում է նախարարության աշխատակազմի կառուցվածքը.

5) իրականացնում է Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:

41. Նախարարության աշխատակազմի ղեկավարն օրենքով, այլ իրավական ակտերով, նախարարի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է նախարարության աշխատակազմի ընթացիկ գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, Արցախի Հանրապետության կառավարության և նախարարի որոշումների, սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

42. Նախարարության աշխատակազմի ղեկավարն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետությանը պատճառված գույքային վնասի համար: Նախարարության աշխատակազմի ղեկավարի լիազորությունների դադարեցումը չի կարող հիմք հանդիսանալ պատճառված նյութական վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

43. Նախարարության աշխատակազմի ղեկավարը պարտավոր է չկատարել Արցախի Հանրապետության կառավարության, նախարարի՝ Արցախի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամաններն ու հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

44. Նախարարության աշխատակազմի ղեկավարի բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինում է նրա տեղակալը կամ այլ աշխատող՝ նախարարի հրամանով:

45. Նախարարության աշխատակազմի ղեկավարը՝

1) առանց լիազորագրի՝ իր իրավասության սահմաններում հանդես է գալիս Արցախի Հանրապետության անունից և ներկայացնում նրա շահերը, իր լիազորության սահմաններում դատարանում հանդես է գալիս որպես հայցվոր կամ պատասխանող, տալիս է լիազորագրեր՝ դատարանում գործը վարելու և դատավարական այլ գործողություններ իրականացնելու համար.

2) օրենքով, այլ իրավական ակտերով, Արցախի Հանրապետության կառավարության և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հիմնարկին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) իր իրավասության սահմաններում տալիս է Արցախի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում պաշտոնի (աշխատանքի) նշանակում և պաշտոնից (աշխատանքից) ազատում է նախարարության աշխատակազմի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի ու կարգապահական տույժի միջոցներ.

5) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով շնորհում է Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության դասային աստիճաններ.

6) ապահովում է աշխատակազմում քաղաքացիական ծառայության մասին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերին համապատասխան՝ անձնակազմի կառավարման հետ կապված գործառույթների իրականացումը.

7) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ.

8) նախարարի հաստատմանն է ներկայացնում նախարարության աշխատակազմի տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, այդ թվում՝ ապահովում է նախարարության աշխատակազմի հաշվապահական հաշվառումը վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը, նախարարի հաստատմանն է ներկայացնում նախարարության աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը, միջոցներ է ձեռնարկում ստուգումներով հայտնաբերված ֆինանսական խախտումների վերացման համար.

9) նախարարին ներկայացնում է առաջարկություններ նախարարության աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ.

10) կազմակերպում է նախարարության բյուջեի նախագծի նախապատրաստական աշխատանքները և ապահովում բյուջետային միջոցների ծախսերի կատարումը.

11) կազմակերպում է նախարարությունում քննարկումների և խորհրդակցությունների անցկացումը.

12) վերահսկում է նախարարության աշխատակազմի կողմից սահմանված ժամկետներում աշխատանքների կատարման ընթացքը.

13) նախարարի ստորագրությանն է ներկայացնում նախարարի հրամանները, ինչպես նաև կարգադրությունները.

14) ապահովում է համագործակցությունը Արցախի Հանրապետության պետական իշխանության մարմինների աշխատակազմերի հետ.

15) կազմակերպում է նախարարությունում գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքները.

16) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

46. Նախարարության աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը ղեկավարում է նախարարության աշխատակազմի ֆինանսական և հաշվապահական ծառայությունները, գործում է նախարարության աշխատակազմի ղեկավարի անմիջական ենթակայությամբ և իրականացնում «Գանձապետական համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով իր վրա դրված լիազորությունները:

47. Նախարարության աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը պատասխանատու է հաշվապահական հաշվառումը վարելու, նախարարության աշխատակազմի ֆինանսական, բյուջետային, հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

8. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

48. Նախարարության աշխատակազմը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններին ներկայացնում է ֆինանսական, հարկային, մաքսային, պարտադիր վճարների և վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

49. Նախարարության աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

9. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

50. Նախարարության աշխատակազմի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

(Հավելված 1-ը լրաց. 28.12.2011 N 1018-Ն, խմբ., լրաց., փոփ. 28.12.2013 N 958-Ն, լրաց., փոփ. 28.03.2014 N 174-Ն, փոփ. 22.12.2014 N 879-Ն, լրաց. 03.12.2015 N 806-Ն, խմբ. 12.10.2017 N 45-Ն)

ԼՂՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար ***Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ***

Հավելված 2
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարության 2004 թվականի
մարտի 16-ի N 63 որոշման

Կ Ա Ռ Ո Ւ Ց Վ Ա ԾՔ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

I. Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Վարչություններ

1) Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն
2) Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն
3) Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն

2. Բաժիններ

1) Գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության բաժին
2) Ագրովերամշակման զարգացման բաժին
3) Ջրային տնտեսության և ինժեներական մելիորացիայի բաժին
4) Իրավաբանական բաժին
5) Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
6) Ընդհանուր բաժին

II. Առանձնացված ստորաբաժանումներ

1) Գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչություն
2) Ջրային համակարգերի օգտագործման և պահպանության պետական տեսչություն

(Հավելված 2-ը խմբ. 26.05.2004 N 209, փոփ. 26.01.2005 N 24, խմբ. 20.12.2005 N 562, խմբ. 09.10.2007 N 417, խմբ. 28.12.2011 N 1018-Ն, խմբ. 14.03.2012 N 109-Ն, խմբ. 28.12.2013 N 958-Ն, խմբ. 03.12.2015 N 806-Ն, խմբ. 12.10.2017 N 45-Ն, խմբ. 03.08.2018 N 643-Ն)

ԼՂՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար ***Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ***

Հավելված 3
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
«16» մարտի 2004թ. N 63 որոշման

Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը
(վերնագիրը փոփ. 12.10.2017 N 45-Ն)

հաշվի համար	հ/հ	Գույքի անվանումը	Քանակը	Գումարը
1	2	3	4	5
010	1.	Վարչական շենք	1	21034564
		Ընդամենը		21034564
013	1.	Պատճենահանման մեքենա Canon NP-1215	1	793504
	2.	Պրինտեր LaserJet-5L	1	189040
	3.	Համակարգիչ Pentium -2	2	879600
	4.	Պրինտեր HP DeskJet-690C գունավոր	1	125733
	5.	Սկաներ HP SJ-5p	1	154166
	6.	Համակարգիչ Pentium -3	2	924200
	7.	Պրինտեր LaserJet-1100	2	300000
	8.	Ներքին հեռախոս «Panasonic» 6-16KX-T	1	666900
	9.	Հեռուստացույց «Philips»	1	100000
	10.	Համակարգիչ Notebook Pentium-3	1	1090000
	11.	Հեռուստացույց JVC	1	150737
	12.	Տեսամագնիտաֆոն JVC	1	64900
	13.	Համակարգիչ Pentium -4	1	607700
	14.	Համակարգիչ 386/166	1	100000
	15.	Ֆաքս Panasonic KX-FT73	1	201100
		Ընդամենը		6347580
015	1.	Ավտոմեքենա «Նիվա» Վազ -21213	1	3036369
	2.	Ավտոմեքենա «Նիվա» Վազ -21213	1	2918740
	3.	Ավտոմեքենա «Նիվա» Վազ -21213	1	2825000
	4.	Ավտոմեքենա ԳԱԶ 31-1000	1	2980800
	5.	Ավտոմեքենա ՈւԱԶ 31514	1	3000000
	6.	Ավտոմեքենա ԳԱԶ-3110-121	1	3963610
		Ընդամենը		18724519
016	1.	Օդավորակավորիչ	19	282375
	2.	Սառնարան «Սարատով»	2	16760
	3.	Բազմոց	2	10424
	4.	Բիլիարդի սեղան	1	20850
	5.	Պահարան երկաթյա	5	62850
	6.	Սեղան երկտումբանի	18	123326
	7.	Գրքերի պահարան	12	90202
	8.	Սեղան կոմբինացված	8	76856

	9.	Գրասեղան	2	7000
	10.	Պահարան հագուստի	2	4000
	11.	Սեյֆ երկաթյա	12	83386
	12.	Սեյֆ երկաթյա չհրկիզվող	1	7880
	13.	Հեռուստացույց «Shivaki»	1	185000
	14.	Տեսամագնիտաֆոն «Shivaki»	1	110000
	15.	Սեղան կլոր	1	17311
	16.	Գրասեղան	1	175500
	17.	Գրասեղան կոմբինացված	1	292500
	18.	Գրասեղան նիստերի (10 աթոռներով)	1	321700
	19.	Գորգ (3x4)	1	54000
	20.	Ուղեգորգ (1.5x7.85)	1	50000
	21.	Սառնարան «Stinol»	1	251500
	22.	Բազկաթոռ	9	597312
	23.	Հեռուստացույցի տակդիր	1	52500
	24.	Բազմոց 2 բազկաթոռներով	1	227200
	25.	Սեղան լրագրերի	1	85800
	26.	Մագնիտաֆոն	1	189188
		Ընդամենը		3395420
071	1.	Ջահ	5	149708
	2.	Ջահ	4	44071
	3.	Միկրոհաշվիչ	13	62150
	4.	Էլեկտրոսալիկ	4	22337
	5.	Հեռախոսի ապարատ	20	132443
	6.	Աթոռ կիսափափուկ	77	4620
	7.	Կախարան հագուստի	11	4853
	8.	Հայելի	2	1600
	9.	Ժամացույց էլեկտրոնային	2	4300
	10.	Սեղան լրագրերի	2	3600
	11.	Բազկաթոռ դահլիճի	72	150520
	12.	Կրակմարիչ ՕԽՊ-10	2	2900
	13.	Դույլ հակահրդեհային	2	360
	14.	Բահ	2	380
	15.	Լինգ	1	380
	16.	Սանդուղք	2	21500
	17.	Դույլ ցինկապատ	6	8400
	18.	Թեյնիկ	1	2000
	19.	Սպասք թեյի	2	11200
	20.	Թեյի բաժակների կոմպլեկտ	2	9000
	21.	Ժամացույց պատի	2	7900
	22.	Աթոռ կիսափափուկ	6	129600
	23.	Ամբիոն	1	17000
	24.	Պահարան պատի	3	120252
	25.	Վարագույր	10	112000
	26.	Օդափոխիչ	1	11000

	27.	Եռացուցիչ էլեկտրական (ռադիատոր)	14	684450
	28.	Կուվշին բաժակներով	2	11000
	29.	Գորգաածածկույթ	1	33750
	30.	Ավտոանտենա	1	7500
	31.	Բջջային հեռախոս	1	92800
	32.	Ռադիոընդունիչ	2	68000
	33.	Բաժակ	12	13000
	34.	Բաժակ	12	5800
	35.	Ափսե	6	2800
	36.	Թեյնիկ	1	4500
	37.	Եռացուցիչ սուրճի	1	3500
	38.	Փոշեկուլ	1	27000
	39.	Գրասեղան	2	86100
	40.	Դանակ սեղանի	12	3000
	41.	Բազմոցի պաստառ	1	16000
	42.	Սկուտեղ	2	3700
	43.	Ափսե (աղանդ.)	18	6440
	44.	Գդալ թեյի	12	3120
	45.	Պատառաքաղ	12	4440
	46.	Դույլ	1	4000
	47.	Ռադիոընդունիչ	12	60000
	48.	Բահ	4	3600
	49.	Կողպեք	3	2100
Ընդամենը				2180674
Ընդհանուրը				51682757

(Հավելված 3-ը փոփ. 12.10.2017 N 45-Ն)

ԼՂՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար ***Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ***